

ՍՊԱՆԻՈՅ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱՔԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ
Iglesia Apostólica Armenia de España

Reverendo Padre

SASOON ZUMROOKHDIAN

Vicario General del Delegado Pontificio
para España y Portugal

Teléfono fijo (00 34) 93 410 94 18

Teléfono Móvil: (00 34) 689 944 169.



Տ. ՍԱՍՈՒՆ Ծ. ԿՐԴ. ՋՄՐՈՒԽՏԵԱՆ

Հայրապետական Պատուիրակի Ընդհանուր
Փոխանորդ Սպանիայի և Փորթուգալի

Հեռ. (00 34) 93 410 94 18

Բջջ. (00 34) 689 94 41 69

Carrer de Cgrsega 195, Entresuelo 2, 08036, Barcelona, España

e-mail: hayrsasoon@gmail.com

5 Ապրիլ 2011

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ԿԱԴԻՍ
Ս.թ. Մայիս 1-ին, Կիրակի, ժամը 12:00-ին:

Ըստ իսպանական պատմական աղբյուրների 17-րդ դարում Հայ վաճառականները Ջուդայից և այլ մահմեդական երկրներից հաստատվել են Կադիսում և զբաղվել են առևտրով՝ ստեղծելով առաջին Հայ համայնքը Իսպանիայի Թագավորությունում:

Կադիսի առաջին Հայ համայնքը ունեցել է իր եկեղեցին Capilla de Jesús Nazareno (Հիսուս Նազովրեցի մատուռը), որտեղ նրանք աղոթել են, ինչպես նաև՝ կառուցել են բացմաթիվ մեծ կառույցներ: Ըստ իսպանական աղբյուրների գործող Կադիսի ծերանոցի շենքը, Կադիսի ամենաբարձր աշտարակ դիտակետը և քաղաքապետարանի շենքը կառուցվել են հայ վաճառականների բարերարությամբ:

Իբրև Իսպանիայի Թագավորությունում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու առաջին սպասավորը՝ հրավիրում են Իսպանիայում բնակվող բոլոր Հայերին ս.թ. Մայիսի 1-ին, Կիրակի օրը կատարել մեր առաջին ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԴԻՍ, որպեսզի նախ՝ վերանորոգենք մեր կապը պատմական ճանապարհ անցած հին Հայ համայնքներից մեկի հետ, աղոթենք այն նույն եկեղեցիում, ուր դարերով աղոթել են մեր նախնիները, հոգեհանգստյան մասնավոր պաշտօն կատարենք, եկեղեցու բարերար Շաքարյան Դավիթ, Պողոս և Հակոբ եղբայրների հոգվոց:

Այս սրբազան առիթով Անդալուսիայի, Մալագայի և Սևիլլայի շրջանների Հայ Առաքելական Եկեղեցու ծխական վարչությունները կազմակերպում են ավտորուսային երթ/ ուխտագնացության դեպի Կադիս: Մանրամասների համար կարող եք դիմել հետևյալ անձանց՝


Մալագայի շրջան: Դոկտ. Անդրանիկ Պապոյանին՝ 607 729 337,
Վրեժ Տեր Գրիգորյանին՝ 678-783-418

Սևիլլաի շրջան՝ Դոկտ. Արմեն Սինոնյանին՝ 677 676 413
Հայկ Պուլշղարյան՝ 633 733 636
Հակոբ Յապուջյան՝ 697 552 411

Կադիսի եկեղեցու հասցեն՝
Capilla de Jesús Nazareno en Cadiz
C/ Santa María s/n
11005 CADIZ

Իբրև ՈՒԽՏԱՎՈՐ կոչ եմ անում բոլորիս միասին կատարել այս պատմական առաջին ուխտագնացությունը Կադիս և միասին աղոթել այն նույն եկեղեցիում ուր աղոթել են մեր առաջին հայ համայնքի անդամները և սույնով մեր երախտապարտությունը հայտնել մեր նախնիներին մեզ ժառանգվածի համար:

Աղոթարար՝



S. ՍԱՍՈՒՆ Ծ. ՎՐԴ. ԶՄՐՈՒԽՏԵԱՆ
Իսպանիայում և Պորտուգալիայում
Հայրապետական Պատուիրակի Ընդհանուր Փոխանորդ